

ՀՀ բույսերի Կարմիր գրքի վարման հանձնաժողովի նիստի

ՀՀ բնապահպանության
նախարարություն

ք. Երևան
30 հոկտեմբեր 2009թ.

Օրակարգում.

1. «ՀՀ Կարմիր գրքի լրամշակում» ծրագրի շրջանակներում նախապատրաստված «ՀՀ բույսերի Կարմիր գրքի» ներկայացում:
զեկ. Տ.Դանիելյան՝ ՀՀ բնապահպանության նախարարության կենսաբազմազանության և ջրային ռեսուրսների պահպանության բաժնի պետ,
2. «ՀՀ բույսերի Կարմիր գրքի» վերաբերյալ հանձնաժողովի եզրակացության ընդունում:

Մասնակցեցին՝

Ա. Հարությունյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար (հանձնաժողովի նախագահ),
Ժ. Վարդանյան	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի տնօրեն, կենս.գիտ.դոկտոր, պրոֆեսոր (հանձնաժողովի նախագահի տեղակալ),
Ն. Խանջյան	Երևանի Հր.Աճառյանի անվան համալսարանի կենսաբանության և էկոլոգիայի ամբիոնի վարիչ (հանձնաժողովի քարտուղար),
Ս. Պապյանը	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ,
Ա. Զիրոյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության պետ, կենս.գիտ.դոկտոր,
Տ. Դանիելյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարարության աշխատակազմի շրջակա միջավայրի պահպանության վարչության կենսաբազմազանության և ջրային ռեսուրսների պահպանության բաժնի պետ, կենս.գիտ.թեկնածու,
Է. Գաբրիելյան	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի կարգաբանության բաժնի վարիչ, կենս.գիտ.դոկտոր, պրոֆեսոր,
Գ. Ֆայվուշ	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի առաջատար գիտ.աշխատող, կենս.գիտ.դոկտոր,
Ա. Դուկասյան	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի ավագ գիտ.աշխատող, կենս.գիտ.թեկնածու,
Կ. Թամանյան	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի առաջատար գիտ.աշխատող, կենս.գիտ.թեկնածու,

Ժ. Հակոբյան

Լ. Օսիպյան

Ս. Նանագուլյան

Հայաստանի Հանրապետության գիտությունների
ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի
ավագ գիտ.աշխատող, կենս.գիտ.թեկնածու,
Երևանի պետական համալսարանի կենսաբանական
ֆակուլտետի բուսաբանության ամբիոնի պատվավոր
վարիչ, ակադեմիկոս,
Երևանի պետական համալսարանի կենսաբանական
ֆակուլտետի բուսաբանության ամբիոնի վարիչ,
կենս.գիտ.դոկտոր:

Ներածական խոսքով հանդես եկավ ՀՀ բնապահպանության նախարար՝ պարոն
Ա.Հարությունյանը:

Ելույթներով հանդես եկան՝.

Ժ. Վարդանյանը, Ա. Զիրոյանը, Է. Գաբրիելյանը, Գ. Ֆավուշը, Ս. Պապյանը,
Ն. Խանջյանը, Կ. Թամանյանը, Լ. Օսիպյանը, Ս. Նանագուլյանը:

Քննարկվեցին հարցեր կապված Կարմիր գրքի պատրաստման ընթացքում միջազգային
չափանիշների /IUCN-ի կատեգորիաներ/ օգտագործման, նոր տեսակների և բուսական
համակեցությունների ընդգրկման, Կարմիր գրքի տպագրման, ներառվող տեսակների
պահպանության կազմակերպման հետ և այլն:

Որոշեցին.

Ընդունել «ՀՀ բույսերի Կարմիր գրքի» վերաբերյալ հետևյալ եզրակացությունը՝


ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բույսերի Կարմիր գրքի վարման հանձնաժողովի նիստի
2009թ հոկտեմբերի 30-ի


ՀՀ բույսերի Կարմիր գրքի վարման հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ բույսերի
Կարմիր գրքի վարման կարգով (հաստատված ՀՀ բնապահպանության նախարարի
12.02.04թ թիվ 23-Ն հրամանով) որոշել է.

1. Հաստատել ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

ՀՀ բույսերի Կարմիր գրքի հանձնաժողովի
նախագահ՝


Ա.Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝



Ն. Խանջյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

ՀՀ կենդանիների Կարմիր գրքի վարման հանձնաժողովի նիստի

ՀՀ բնապահպանության
նախարարություն

ք. Երևան
30 հոկտեմբեր 2009թ.

Օրակարգում.

1. «ՀՀ Կարմիր գրքի լրամշակում» ծրագրի շրջանակներում նախապատրաստված «ՀՀ կենդանիների Կարմիր գրքի» ներկայացում:
զեկ. Տ. Դանիելյան՝ ՀՀ բնապահպանության նախարարության կենսաբազմազանության և ջրային ռեսուրսների պահպանության բաժնի պետ,
2. «ՀՀ կենդանիների Կարմիր գրքի» վերաբերյալ հանձնաժողովի եզրակացության ընդունում:

Մասնակցեցին.

Ա. Հարությունյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար (հանձնաժողովի նախագահ),
Հ. Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի (ԿՀԳԿ) գիտական քարտուղար (հանձնաժողովի քարտուղար)
Ս. Պապյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ,
Տ. Դանիելյան	ՀՀ բնապահպանության նախարարության կենսաբազմազանության և ջրային ռեսուրսների պահպանության բաժնի պետ, կենս. գիտ. թեկնածու,
Մ. Քալաշյան	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ԿՀԳԿ ավագ գիտաշխատող, կենս. գիտ. թեկնածու,
Ա. Աղասյան	ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության բնության հատուկ պահպանվող տարածքների բաժնի պետ, կենս. գիտ. թեկնածու,
Կ. Ճենտերեճյան	ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության կենդանական աշխարհի կառավարման բաժնի պետ, կենս. գիտ. թեկնածու,
Բ. Գաբրիելյան	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ԿՀԳԿ ձկնաբանության և հիդրոէկոլոգիայի ինստիտուտի տնօրեն, կենս. գիտ. դոկտոր,
Ն. Մարգարյան	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի էկոլոգիայի և բնապահպանության ամբիոնի վարիչ, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ,
Մ. Մարջանյան	Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ԿՀԳԿ ավագ գիտաշխատող, կենս. գիտ. թեկնածու,

Ֆ.Դանիելյան

Է.Յավրույան

Երևանի պետական համալսարանի կենդանաբանության ամբիոնի վարիչ, կենս.գիտ.դոկտոր, պրոֆեսոր,
Երևանի պետական համալսարանի կենդանաբանության ամբիոնի պրոֆեսոր, կենս.գիտ.դոկտոր:

Ներածական խոսքով հանդես եկավ ՀՀ բնապահպանության նախարար՝ պարոն Ա.Հարությունյանը:

Ելույթներով հանդես եկան .

Հ.Խաչատրյանը, Մ.Քալաշյանը, Ա.Աղասյանը, Բ.Գաբրիելյանը, Ֆ.Դանիելյանը, Է.Յավրույանը, Ն.Մարգարյանը, Կ.Ճենտերեճյանը:

Քննարկվեցին հարցեր կապված Կարմիր գրքի պատրաստման ընթացքում միջազգային չափանիշների (IUCN-ի կատեգորիաներ) օգտագործման, նոր տեսակների ընդգրկման, տեսակները բնութագրող ակնարկների և տարածման քարտեզների, ներառվող կենդանական տեսակների պահպանության կազմակերպման հետ և այլն:

Հանձնաժողովի անդամ Կ.Ճենտերեճյանը առաջ քաշեց Կարմիր գրքում DD և NT կարգավիճակով տեսակների ընդգրկման անհրաժեշտության խնդիրը: Հանձնաժողովի անդամներ՝ Մ.Քալաշյանը, Ա.Աղասյանը, Հ.Խաչատրյանը, Ֆ.Դանիելյանը արտահայտեցին իրենց դիրքորոշումը Կ.Ճենտերեճյանի կողմից ներկայացված կարծիքին:

Որոշեցին.

1. Մեկ շաբաթվա ընթացքում քննարկել և աշխատանքային կարգով լուծել առաջացած մասնագիտական հարցը:
2. Ընդունել «ՀՀ կենդանիների Կարմիր գրքի» վերաբերյալ հետևյալ եզրակացությունը՝


ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենդանիների Կարմիր գրքի վարման հանձնաժողովի նիստի
2009թ հոկտեմբերի 30-ի

ՀՀ կենդանիների Կարմիր գրքի վարման հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կենդանիների Կարմիր գրքի վարման կարգով (հաստատված ՀՀ բնապահպանության նախարարի 16.02.04թ թիվ 28-Ն հրամանով) որոշել է.

1. Հաստատել ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

ՀՀ կենդանիների Կարմիր գրքի հանձնաժողովի
նախագահ՝


Ա. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝



Հ. Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ բնապահպանության նախարար Ա.Հարությունյանի մոտ
2009թ դեկտեմբերի 1-ին կայացած հասարակական լսումների

Մասնակցեցին.

Ս.Պապյան	Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ,
Ժ.Գալյան	«Էկոտորիզմի ասոցիացիա»- ՀԿ նախագահ
Կ.Մանվելյան	WWF-ի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն
Ա.Իսկոյան	ԵՊՀ Էկոլոգիական իրավական գիտաուսումնական կենտրոնի նախագահ
Ս.Հակոբյան	«Էկոլոգիական կենսակայունություն» ՀԿ նախագահ
Գ.Օզանեզովա	«Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ փոխնախագահ
Ա.Համբարձումյան	«Խազեր» Էկոլոգամշակութային ՀԿ տնօրեն
Հ.Ասլանյան	«Շողեր միություն» ՀԿ նախագահ
Հ.Խաչատրյան	FPWC/EPAC անդամ
Գ.Քոչինյան	«Էկոլուր» ՀԿ անդամ
Է.Դուկասյան	«Էկոլոգիական կենսակայունություն» ՀԿ անդամ
Ա.Դուկասյան	«Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության միավորում» ՀԿ անդամ
Վ.Ավետիսյան	«Հանուն մարդկային կայուն զարգացման» ՀԿ անդամ
Ս.Արամյան	«Էկոդաշինք» ՀԿ անդամ
Լ.Հովհաննիսյան	«Կայուն ջրային միջավայր» ՀԿ անդամ
Հ. Խաչատրյան	ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտական քարտուղար, ՀՀ կենդանիների Կարմիր գրքի աշխատանքային խմբի ղեկավար,
Կ. Թամանյան	ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի առաջատար գիտ.աշխատող, ՀՀ բույսերի Կարմիր գրքի աշխատանքային խմբի ղեկավար,
Ա. Զիրոյան	ՀՀ բնապահպանության նախարարարության կենսատեսությունների կառավարման գործակալության պետ,
Տ. Դանիելյան	ՀՀ բնապահպանության նախարարության կենսաբազմազանության և ջրային ռեսուրսների պահպանության բաժնի պետ,
Ա. Աղասյան	ՀՀ բնապահպանության նախարարության կենսատեսությունների կառավարման գործակալության բնության հատուկ պահպանվող տարածքների բաժնի պետ:

Օրակարգում.

«ՀՀ կենդանիների Կարմիր գրքի» և «ՀՀ բույսերի Կարմիր գրքի» ներկայացում:

Ձեկ. ՀՀ բնապահպանության նախարարության կենսաբազմազանության և ջրային ռեսուրսների պահպանության բաժնի պետ՝ Տ. Դանիելյանը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ բնապահպանության նախարար Ա.Հարությունյանը: Նա իր ելույթում կարևորեց ՀՀ Կարմիր գրքի պատրաստման խնդիրը՝ Հայաստանի կենսաբազմազանության պահպանության տեսակետից և տեղեկացրեց, որ «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը տեղադրված են ՀՀ բնապահպանության նախարարության www.mnp.am կայքում: ՀՀ Կարմիր գրքի մշակման ժամանակ աշխատանքային խմբերում բազմիցս կազմակերպվել են մասնագիտական քննարկումներ, որոնց մասնակցել են գիտական և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ: ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր

գրքերը հաստատվել են ՀՀ Կարմիր գրքի հանձնաժողովների կողմից: Դրական կարծիքներ են ստացվել բոլոր շահագրգիռ գերատեսչություններից:

ՀՀ բնապահպանության նախարարությունը, կազմակերպելով հասարակական լսումներ բնապահպանական հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ, նպատակ է հետապնդում ներգրավել նրանց կենսաբազմազանության պահպանության և որոշումների ընդունման գործընթացներին և իրազեկել հասարակության լայն զանգվածներին խնդրի կարգավորման հրատապության և անհրաժեշտության մասին:

Ելույթներով հանդես եկան.

Ա.Իսկոյանը, Հ.Խաչատրյանը, Գ.Օգանեզովան, Ա.Ադասյանը, Ս.Պապյանը, Կ.Մանվելյանը, Ս.Հակոբյանը, Կ.Թամանյանը, Ժ.Գալյանը, Ա.Զիրոյանը, Ս.Ադամյանը, Ա.Ղուկասյանը, Վ.Ավետիսյանը:

Քննարկվեցին. հարցեր կապված Կարմիր գրքի պատրաստման ընթացքում միջազգային չափանիշների (IUCN-ի կատեգորիաներ) օգտագործման, տեսակները բնութագրող ակնարկների և տարածման քարտեզների, ներառվող տեսակների պահպանության կազմակերպման, անհետացման վիճակին մոտ գտնվող (NT) և տվյալների անբավարարություն ունեցող (DD) տեսակները հավելվածում ընդգրկելու, Կարմիր գրքի տեսակների մասին գիտաճանաչողական նյութեր հրատարակելու, Կարմիր գրքի տպագրումից հետո ՀՀ օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու, Կարմիր գրքային տեսակների ոչնչացման դեպքում վարչական և քրեական պատասխանատվության ենթարկելու հետ և այլն:

Մասնավորապես, Բնության Համաշխարհային Հիմնադրամի տնօրեն Կ. Մանվելյանը, մեկնաբանելով ներկայացված նյութերը և բարձր գնահատելով մասնագետների լայնածավալ աշխատանքը, հանդես եկավ մի շարք առաջարկություններով՝ ԲՊՄՄ չափորոշիչների օգտագործման, քարտեզների և նկարների հստակեցման, որոշ կենդանատեսակների ընդգրկման և այլնի վերաբերյալ, որոնց մասին աշխատանքային խմբերի ղեկավարների կողմից տրվել են մասնագիտական պարզաբանումներ:

Որոշեցին.


1. Ընդհանուր առմամբ հավանության արժանացնել ՀՀ բույսերի Կարմիր գիրքը և ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

2. Առաջարկել հասարակական կազմակերպություններին անհրաժեշտության դեպքում մինչև ս.թ. դեկտեմբերի 4-ը ՀՀ բնապահպանության նախարարություն ներկայացնել Կարմիր գրքի վերաբերյալ առաջարկությունները:

3. Շրջակա միջավայրի պահպանության վարչությանը՝ ներկայացված առաջարկությունների հիման վրա անհրաժեշտության դեպքում լրամշակել «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» և «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

4. Առաջարկել ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Ս.Պապյանին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ Կարմիր գրքի վերաբերյալ գիտաճանաչողական գրքույքներ հրատարակելու ուղղությամբ:

ՀՀ բնապահպանության
նախարար՝



Ա.Հակոբյանյան

Արձանագրությունը կազմեց՝
Հ.Գևորգյան